

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

(Ժ) Բիշոփուս գրքում են միմայն խմբագրատան մէջ:

(Պատրագրաբարձր գիւտում են ուղղակի
Tuchman. Pedagogia „Muzak“

ՄԱՆԿ

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նացի կիրակի և տոն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՒԱՆԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ոչինչից օգուտ քաղել չը գիտենք:—Ն երբ ին
տ ես ու թ ի լ ի ն: Նամակ Մոսկովայից: Նամակ Ա.
խալցիսայից: Ներքին լուրեր:—Արտաքին տե.
ս ու թ ի լ ի ն: Ֆրանսիա:—Վշակիչ հեռագիրներ:—
Հայտարարութիւններ:—Տեղեկացոյց:—Բանասի.
րակաւ: Զեւարկութիւնների ձեւեր և առևտրա.
կան ընկերութիւններ:

ՈՉԻՆՉԻՑ ՕԳՈՒՏ ԲԱՆԵԼ ՉԸ ԳԻՏԵՆԲ

Մշակարիտ ամօթ է, որ հայերի
պէս մի ընդունակ ազգութիւն
վատնում է իր ամբողջ ոյ.
ժերը միմիայն երկու գլխաւոր
պարապմունքների վրա՝ վաճառա.
կանութեան և պետական ծառա.
յութեան վրա:

Պետական ծառայութիւնն էլ
վաճառականութիւնն էլ շատ օգ.
տաւէտ պարապմունքներ են, բայց
միթէ կարելի է այդ աստիճան
միակողմանի լինել և ամենքին
պարապել միմիայն հասարակական
գործունէութեան երկու ճիւղե.
րով....

Մեր հարուստ երկրի ո՞ր կող.
մի և դարձնէք ձեր հայեացքը, ա.
մեն տեղ կը տեսնէք հարստա.
նալու համար առատ աղբիւր.
ներ:

Իսկ մեր բոլոր կապիտալները
գործ են դրվում վաճառականու.
թեան վրա: Գնալ Ռուսաստան,
կամ արտասահման, առնել այն.
տեղ ապրանքները, բերել այդ

ապրանքները Կովկաս և ծախել
նրանց կրկնակի գնով,— ահա միակ
գործադրութիւնը մեր կապիտալ.
ների: Եւ մեծ մասամբ մեր բե.
րած ապրանքը շուայրութեան ա.
ռարկաներն են, և ոչ թէ առա.
ջին հարկաւորութեան մթերքներն
են:

Ուրիշ կողմից մեր երիտասար.
դութիւնը, որ գնում է օտար եր.
կիրները ուսում առնելու համար,
անպատճառ ձգտում է բարձրա.
գոյն, համալսարանական ուսման:
Մեր երիտասարդներից ոչ ոք չէ
մտածում մի որ և է արհեստ սո.
վորելու, և այնպիսի արհեստ որ
փոքր գումարներով կարող էր շա.
հաւէտ լինել:

Մեր երկիրը իր բնական հա.
րստութեան կողմից նման է Ե.
մերիկային: Բայց ո՞ր հայր մտա.
ծում է սովորել մի որ և է ար.
հեստ, որ օգուտ քաղի մեր եր.
կրի բնական հարստութիւններից:
Եւ դժբանք անհամար հարստու.
թիւններ ունենալով մենք ոչինչ
չենք վաճառահանում մեր երկրից,
մերձապէս չենք էլ մտածում պա.
րապել այնպիսի արհեստներով և
այնպիսի տնտեսութեամբ, որի
արդիւնաբերածը նոյն իսկ երկրի
մէջ վաճառվեր: Հատ ժամանակ
չէ մենք կարգացնք լրագիրնե.
րում որ մի ամերիկացի միմիայն
խոզեր պահելով միլիոնատէր էր
դարձել և մեռնելով ահագին գու.
մար էր կտակել իր հայրենի քա.

ղաքին բարձրագոյն մի դպրոցի
կառուցման համար:

Նայենք մեր չորս կողմը. ամեն
տեսակ արհեստներ, ամեն տեսակ
տնտեսութիւններ օտարների գեր.
մանացիների կամ ֆրանսիացիների
ձեռքումն են Կովկասում: Իսկ
մենք ինքներս ոչինչ բանից օգուտ
չենք քաղում: Պանրագործութիւն,
կաթնային տնտեսութիւն, գինե.
գործութիւն, հաւապահութիւն և
այլն,— ամեն բան օտարների ձեռ.
քումն է: Եւրեւանի նահանգը պատ.
րաստում է գինի շատ նահապե.
տական ձեռով գալիս է մի ֆրան.
սիացի, սկսում է նոյն խա.
ղողից ընտիր և վաճառահան.
վելու ընդունակ գինի պատրաս.
տել և ծախում է այդ գինին եր.
կու անգամ աւելի թանգ գնով:
քան թէ մենք ենք ծախում: Իսկ
մեր երիտասարդները կամ վաճա.
ռականութիւն են անում, անտես
առնելով բնութեան հարստու.
թիւնները, կամ գնում են համալ.
սարաններ, որտեղից վերագառնա.
լով չինոփնիկներ են լինում:

Մեր այգիները լի են մրգերով,
—բայց ոչ ոք մեզանից չի մտած
մեր այգիների այդ մրգերից չորա.
ցած մրգեր պատրաստել այն ինչ
Ֆրանսիայից մեզ մօտ բերվող չո.
րացած մրգերի մի փոքրիկ արկ.
ղիկի համար մենք վճարում ենք
1—2 ռուբլ.... Մի ֆունտ կօն.
ֆետների համար մենք վճարում
ենք 1 ռուբլ և այդ գործով պա.

րապողները բոլորն էլ ֆրանսիա.
ցիներն են և ոչ մի հայ այդ տե.
սակ շահաւէտ պարապմունք չէ
յանձն առնում:

Մեր աղքատ ընտանիքների
կանայքն ու օրիորդները, փոխա.
նակ տանը անգործ ժամանակն
անցնելու, ինչի չեն պարապում
հովհարներ, արուեստական ծա.
ղիկներ և այլ այդ տեսակ գոր.
ծեր շինելու....

Մեր վաճառականների, գիւղա.
ցիների, հացթուխների, թուրխ.
չիների որդիք ի՞նչ արիստոկրատ.
ներ են, որ հէնց որ քիչ փող ու.
նեն, անպատճառ պէտք է գնան
համալսարանները, դիպլոմներ ըս.
տանան, որպէս զի չինոփնիկներ
լինեն, ձեռնոցներ հագնեն ու ցի.
լինդր ծածկեն: Եւ եթէ այդ տե.
սակներին չէ էլ աջողվում ծառա.
յութիւն մտնել, նորանք աւելի
լաւ են համարում նոյն ձեռնոցնե.
րով և ցիլինդրով անգործ փողոց.
ներում թափառել, կամ ինչպէս
ասում են փողոցները չափել, բան
թէ նստել մի համեստ, շահաւէտ
և օգտաւէտ արհեստով պարա.
պել:

Մենք միշտ ասել ենք, մեր
հայոց ազգի պէս, որ այդքան
գուրկ լինէր արիստոկրատիայից,
բայց մի և նոյն ժամանակ այդ.
քան թէ թու արիստոկրատական
զգացմունքով խմորված լինէր,—
աշխարհիս երեսին ուրիշ ազգ չը
կայ....

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԵՆՈՒՄԻՆԻՏԻՆԵՐԻ ԶԵՆՈՐ

ՆԻ

ԱՌԵՔՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բայց թողնենք ընթերցողին դատել:
Առևտրական ընկերութիւնները այն հիմնարկու.
թիւններիցն են, որոնք համարեա լիովին նոր դա.
բերի ծնունդ են: Դրանով չը պիտի հասկանալ թէ
հին դարերում, Գրեանսում և Հռոմում օրի.
նակ, և կամ մեր միջին դարերում երբէք ընկերու.
թիւններ գոյութիւն ունեցած չեն: Ոչ, եղած են,
բայց ինչպէս:

Գրեանսում և Հռոմում պակաս չէին ընկերութիւններ,
մասնաւոր քաղաքական, զուարճութիւնների և
կամ բարեգործական ընկերութիւններ. այս, եղած
են նաև ծովային վաճառականութեան ընկերու.

թիւններ, բայց դրանց թիւը շատ սահմանափակ
էր *):

Նա մասնաւոր դարմանալի է, որ Հռոմում
այդպիսի ընկերութիւններ չեն եղած, այն Հռո.
մում, որը աշխարհ է դարձնում իր վերին աս.
տիճանի կատարելագործված օրէնսդրական հիմ.
նարկութիւններով: Ինչպէս է պատահում որ այդ.
պիսի մի տեսութեան մէջ, որը այն ժամանակ
յայտնի երկրներէց մեծ մասը իրան հպատակեցրեց,
որը ուրեմն առևտրական մեծ շարժողութիւն պի.
տի ունեցած լինէր, այնու ամենայնիւ թէ աշխա.
տանք և թէ կապիտալ մրացնելու կարօտութիւն
ունեցած չէ: Չէ թէ այն ժամանակ արիստոկրա.
տութեան, ազնուականութեան մի մեծ դաս կար,
կային մեծ հարստութիւններ, մեծ ձօնութիւններ,
որոնք վերին աստիճանի փառթամութեան հասան.
ուստից էին ծառում կենքի և ձօնութեան հա.
մար այդքան տեսակ առարկաներ: Այդ և դրա
նման հազար ու մէկ այլ հարցերի լուծումը կը մեկն.
վին, եթէ միայն չը մտածանք, այն ժամանա.
կվայ անտեսական և քաղաքական մի հռչակաւոր
հիմնարկութեան գոյութիւնը. այն է՝ ստրկութիւնը:
Որպէս յայտնի է, հնութեան մէջ, մի դաս կար,
որը չէր կազմում բուն հասարակութեան մի մաս,
որը չէր կազմում բուն հասարակութեան մի մաս,

*) Dr. W. Endemann. Die Entwicklung der
Handelsgesellschaften. Berlin, 1867.

ստրկներ էին, որոնք ոչ մի տեսակ իրաւունքներ
չունէին. նրանք պատկանում էին իրանց տէրերին:
Տէրերը կարող էին նրանց ծախել, բանեցնել, ծե.
ծել, սպանել, մի խոսքով անել այն ամենը, ինչ որ
մենք կարող ենք այժմ մի առարկայի և կամ մի
անասունի հետ: Տէրերը էին հարուստ մարդիկ և
բացի ստրկներից, ունէին և մեծ հողեր, ուստից
կարելի էր ձեռք բերել կենքի և ապրուստի հա.
մար հարկաւոր դանաղան հոռւ մթերքներ: Դրանով
արդէն հասկանալի է, թէ ինչպէս էին կառավար.
վում այդ հարուստները: Ի՞նչ հարկաւոր էր գոր.
ծարաններ. ինչ հարկաւոր էր նրանց մեր այժմեան
մեքենաները. էթանութեան և արագութեան համար

չին սրանք. նա ունէր իր ստրուկը, որը իրան հա.
մար ձրի էր աշխատում: ստրուկին հարկաւոր էր
միայն կերակրել ու հագցնել: Այդ լիխոք և հա.
րուստ դասը, ինչն իրան հակառակ է, պիտի ար.
համարէր անձնական աշխատանքը, որովհետեւ դա
ստրուկի գործ էր համարվում: Այդ կործանիչ
հիմնարկութեան հետ ձեռք ի ձեռք էր գնում
Հռոմի աշխարհակալութիւնը: Անընդհատ պա.
տերազմները և մշտական յաջողութիւնները միան.
գամայն մոռցնել էին տուել հռոմէացուն, որ
կենքի և բարօրութեան համար աշխատանք է
հարկաւոր: Բնականաբար Հռոմը մի նոր երկիր,
դրանով աւելանում էր ստրուկների թիւը. նոր

հարստութիւններ և այն պատրաստ հարստութիւն.
ներ, որոնց ձեռք բերելը միայն ցանկութեան էր
պահանջվում: Այդպիսի հանգամանքների մէջ էլ
ինչ պիտի չինէր ընկերութիւնը, էլ ինչ հարկաւոր
էր աշխատանքի և կապիտալի միաւորութիւնը:
Պարզ է, որ դրա մէջ մեծ կարօտութիւն չը կար:
Բայց կարելի է ենթադրել, որ այդ խորտա ազ.
նուականները, նեղը ընկած ժամանակներում, ծա.
ծուկ կերպով մասնակցում էին ուրիշների առե.
տուրի մէջ, որպէս անում էին ֆրանսիական ազ.
նուականները Լուզովիկոս XIV թագաւորութեան
ժամանակ, երբ նրանք տեսան, որ օրէց օր աղ.
քատանում են մեծ ծախսերի պատճառով:

Բոլոր ընկերութիւններից մի տեսակը կար, որը
բաւական դարդացած էր Հռոմում. և այն մի
ընկերութիւն, որը չէ ներկայացնում ոչ աշխա.
տանքի և ոչ կապիտալի միաւորութիւն, այլ որը
հաստատված էր միակ հարստահարութեան սկզբ.
բունքի վրա. այդ տուրքեր և մարքեր հաւաքելու
ընկերութիւններն էին, որպէս մինչ այժմ զեռ.
կարելի է Պարսկաստանում տեսնել:—

Եւ այդպէս՝ մենք տեսնւք թէ ինչ ահալին հե.
տեանքներ ունեցաւ ստրկութիւնը հին երկրնե.
րում: Ստրկութիւնը այն ժամանակվայ կենքի
պայմանն էր և այդ անհրաժեշտութիւնը այն աս.
տիճանի բնական էր թուում, որ այդ հաստատու.

Մի արհեստավոր փինաչու, փողոց աւելոյ մի մշակի, աղջիկը կը մեռնի, բայց մի տան մէջ աղա- խին չի դառնայ... Կա կամեաւոր է անպատշառ օրիորդ լինել: Մի կեղտոտ, իւղոտ, կոպիտ, անգրա- գէտ, խաբէբայ վաճառականի որ- դին արհամարհանքով կը նայի ձեզ վրա, եթէ նրան խորհուրդ կը տաք, փոխանակ ցիլինդրը գը- խին փողոցները չափելու, օրինա- ւոր արհեստավոր, դերձիկ, կամ կոշիկար դառնալու...

Եւ եթէ, ճշմարիտ, ամեն մարդ մեզանում իր տեղը ճանաչէր, համեստութեամբ իր գործով, ար- հեստով պարապէր, — դորանից հասարակութիւնը կը շահէր, եր- կիրը կը հարստանար, մենք մրցու- թիւն կանէինք մեզ հարստահա- րող զանազան ֆրանսիացի ու գերմանացի խոհարարներին, կոն- դիտէրներին, դերձիկներին, կոշիկ- կարներին, տնտեսներին, գինե- գործներին, պանրագործներին, խո- զարածներին ու սրանց նմաննե- րին, մեր երկրի հարստութիւնը մեր ձեռքում կը մնար, փոխանակ թափվելու օտար երկիրները, և բացի սորանից մենք աւելի քիչ կունենայինք փայլուն կերպով հա- գնված դատարկաշրջիկ անգործ- ներ ու ձրիակներ, կը քշանար էլ իրանց ոյժերը ի գուր վատնող ամբողջ օրը բամբասող ու խտրի- գաներ վարող շրջանիկների թիւը:

Հաւեր պահել, խոզեր պահել, կոշիկ կամ շոր կարել, մէքել շի- նել, կոնֆետներ կամ չոր մրգեր պատրաստել,—այդ բոլորը գործ և աղնիւ գործ է, աւելի աղնիւ, քան թէ դարտակ մանգալ բամ- բասել և խտրիգաներ լարել:

Թող չը մտածեն ընդհանուր հասարակական բարիքի վրա, ան- գամ թող անտես առնեն օտար- ներին մրցութիւն անելու և մեր

երկիրն ու ազգը հարստացնելու իրանց համար գուցէ բարձր և անհասանելի խնդրի վրա,—ոչ թող մտածեն նոյն խի իրանց անձի վրա... Մարդը մի ան- գամ է ապրում, մեռնելուց յետոյ էլ երկրորդ անգամ չէ ծնվում... Բայց մի անգամ ապրել ու ան- գործ ապրել — այդպէս ապրել ճշմարիտ չարժէ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄՈՒՆ ՄՈՍԿՎԱՅԻՑ

8 հոկտեմբերի

Շատ չանցաւ հ. Ստեփանի հանգանակութիւ- նից և ահա մի նորը փոխարինեց նրան Մոսկվա- յում. այդ—Ամբրոսիոս վարդ. Ռուբինեանցի ժո- ղովարարութիւնն է երկրագործական ուսումնա- րանի համար:

Առաջ քան թէ խօսէինք այդ գերազ. հայր սուրբի, որպէս և նրա անունով շինուելիք ուսում- նարանի մասին, եւ աւելորդ չեմ համարում մի համառօտ նկարագիր անել նրա գործունէութեան Մոսկվա ժամանակուց առաջ, որպէս զի աւելի պարզ և հասկանալի լինի ընթերցողի համար նրա ներկան:

Դեռ մի քանի ամիս առաջ «Փորձ» ամսագրի մայիսի (V) համարի մէջ կարդացինք հ. Ռուբի- նեանցի յայտարարութիւնը: Այստեղ՝ հարեանցի հայեացքը գցելով հ. Պօլսի Ռուբինեան վարժարանի վրա, օրին նա ինքն ընծայել է իր 10 հազար ռուբլանոց տունը և որը այժմ պատերազմների պատճառով «փոքր ինչ պարտուց ենթարկվե- ցաւ», —նա հրապարակ է ուսումնական հայելին ներկայի նպատակ մատուցանել մի նոր երկրա- գործական ուսումնարանի համար, որ նա մտադրի է հիմնել կարին քաղաքում: Այս յայտարարութիւ- նից նոյնպէս իմանում ենք, որ պատուելի վարդա- պետը այդ ուսումնարանի խնդրի վերաբերմամբ դիմել է «հանրաժանութեան» Ամստերդամի, ինդրելով նրան մի խնամակալութիւն կազմել իր նախադասութեան անվայր բացակիւք ուսում- նարանի համար: Իսկ յայտարարութեան վերջում նա մի «տարախառն» լուր էլ է հաղորդում մեզ. «ես իմ յօժարութեամբս իմ սեփական վարժարանս սիրելի ազգիս կը նուիրեմ և կը կտա և մ գայն Ս. Էջմիածնի Արարատեան Մկրտչոյն այն պայմանաւ, որ միշտ կանգուն պահուի երկրագոր- ծական Ռուբինեան վարժարանը...»

*) Այստեղ մենք թող ենք տալիս մեզ մի հարց առաջարկել գեր. հ. Ռուբինեանցին. արդեօք նա կտակել է Ս. Էջմիածնին միայն իր սեփական ուսումնարանի շինութիւնը—թէ՛ և այն բոլոր գու- մարները, որ նա ժողովել է և ժողովում է այդ բացակիւք ուսումնարանի համար: Այս խնդիրը մեր կարծիքով շատ կարեւոր է և դրա մասին մենք մեկնութիւն ենք սպասում:

Ինչ և իցէ, մեծ աշխատանքներ կը դա- նազան ազգեր հոռոպեցնեն ինչ Ժանտեղանցի- լով, առևտուրի մի մեծ ապարդէջ բացին: Բացի առևտուրից, երկրագործութիւնից ու խաշնարա- ծութիւնից հասարակ հոռոպեցնելու ուրիշ արդիւ- նաբեր աշխատանք չը գիտէր: Արհեստների և ար- ուստիների վրա ոչ ոք ուշադրութիւն չէր դարձնում: Արդէն մօտենում է այն մեծ դարը, որը հասա- րակութեան կազմակերպութեան մէջ հիմնովին յե- ղափոխութիւններ պիտի առաջացնէր: Մարդկու- թեան համար բացվում է մի նոր դար՝ գալիս է Քրիստոսը իր նոր վարդապետութեամբ, որը քա- ռողում է ամենեցուն եղբայրական սէր և յայտնում բոլորին՝ մեծ ու փոքրիկին, հարուստ ու աղքա- տին, ազնուականին և ստրուկին—հասարակութիւն իրարայլին առաջ, ուրիշն պատերազմ ստրկութեան դէմ: Գարեթի ընթացքում ստրկութիւնը պիտի ջնջվի և ջնջվում է, թէպէտ և նորա տեղը հաստատուում է ճարտութիւնը, որը բռնում է ստրկութեան և ազատութեան մէջ տեղը: Հաս- տատում է քրիստոնէական եկեղեցին և նոր հո- դեօրականութիւն: Փոխվում են նաև ժամանա- կուայ ողին և զարգացողները սեփականութեան աշխատանքի, դրամի վրա և այլն:—Հոգեբանա- նութիւնը և մանուսանդ կաթողիկոսութիւնը, որպէս հակառակ պատկեր հռոմէական վաղուայ հասա-

Բարեք է. բայց ինչպէս պէտք է հասկանալ այս յայտարարութեան միտքը: Խօսելով Վ. Պօլսի Ռուբինեան վարժարանի մասին Ամբրոսիոս հայրը յիշում է, թէ նա մի փոքր պարտուց երթարկ- վեցաւ. և այնուհետեւ փոխանակ պարզելու իր գալու նպատակը—թէ այդ իսկ ուսումնարանի ներկայիս նպատակը ժողովելու համար է եկած— ինչպէս որ իր կոնգրակումն էլ գրած է, նա անց- նում է իսկոյն դէպի Հայաստանի վերակենդանութիւ- նը (մի սովորական միջոց հայի սիրաւ որսալու) և ցանկանում է մի երկրագործական ուսումնարան հիմնել կարնոյ մէջ:

Բայց մենք ի դուր որոնեցինք այդ յայտարա- րութեան մէջ երկրագործական ուսումնարանի կարեւորութիւնը հայերի համար. ինչու անպատշառ երկրագործական ուսումնարանն ոչ թէ քիմիական լաբորատորիա կամ թէ աստղագիտական դի- տանոց, այդ գոնէ մի տարօրինակ երևոյթ կը լինէր...

Մեր կարծիքով այդպիսի ծանր և դժուար ձեռ- նարկութիւնների համար պէտք է մի ընկերութիւն ունենալ և ամենին կարելի չէ հաւատ ընծայել եղական անձանց կարծիքներին: Այստեղ ամենայն կողմից պիտի ջնջվի այդ կարեւոր խնդիրը. թէ որ աստիճանի օգտուէտ կը լինի այդպիսի մի երկրագործական ուսումնարան հիմնելը. արդեօք կը ներկա մեր դրամական միջոցները, որտեղ է արդեօք ամենայնաբար, կան արդեօք պատրաստ ուսուցիչներ և դասագրքեր: Այս բոլոր խնդիրները մի առ մի պէտք է քննվին, մեկնվին և բա- ցատրվին և այդ բացատրութիւնները պէտք է արած լինեն հասկացող, հմուտ և մասնագէտ անձինք: Իրաւի, գեղեցիկ բաղձանք, իդէալներ ու նենայլ շատ գոյնի է, բայց որքան իրագործելի են դրանք և համապատասխան մեր ժողովրդի նե- կայ կենսի վայրմաններին—ասան թէ ինչ տեղ է խնդիրը: Բայց բացատրութիւններ տալու ոչ ոք յանձն չառաւ. միայն ՎՄԿԻՄ-ը մի քանի անգամ խօսք բարձրացրեց այդ խնդրի մասին. իսկ շա- տերը կամ չը լսեցին, կամ թնամութեամբ մեկ- նեցին այդ յարձակմունքները: Զարմանալի թու- լութիւն և անփութութիւն դէպի հասարակական շահերը...

Ինչ և իցէ, բայց հայր Ամբրոսիոսը Ս. Էջմիած- նի կոնգրակում և մի քանի բարեմիտ հայերի ձեռնը- ստութեամբ սկսում է թիֆլիսի եկեղեցիներում և ազգու քարոզներ խօսել և հանգանակութիւն անել ինչեւ ուսումնարանի համար: Թիֆլիսից, ուր նա մնաց 6 ամիս չափ և ուր ժողովեց 6—7 հազար ռուբլի—հայր սուրբը անցնում է Գանձակ, Նուխի, և Շուշի, բայց այս քաղաքներում նա իր սպասա- ծի չափ ընդունելութիւն չէ գտնում: Այնուհետեւ նա դիմում է Բաքու և մտադրել լինելով կրկին վերադառնալ այդ քաղաքը, չուտով թողնում և հասնում է Նիժնի-Նովոգորոդի տնտավաճառը, ուր 7—8 հազար ռուբլի ժողովելով—գալիս է Մոսկվա:

Այս է ահա Ամբրոսիոս հօր ուղեորութեան հա- մառօտ նկարագիրը:

Մոսկվան վաղուց յայտնի է իր առառածեւուն- թեամբ և հիւրասիրութեամբ (хорошолюбивый Моск- ва). նա այս անգամն էլ հաւատարիմ մնաց իր նախապետական սովորութիւններին և հայր Ռուբի- նեանը լիովին վայելեց այդ հիւրասիրութեան բոլոր տեսակները: Մի երկու տեղ բարձրացաւ, խօսք թէ ինչ ուսումնարանի համար է դա փող ժողովում:

Երակութեան, քարոզում է նաև այլ մտքեր: Մտա- բերներ, թէ ինչ էլին մտածում հոռոպեցնելը փողի և աշխատանքի մասին. նոցա համար միայն փողն էր արդիւնաբեր, նոցա համար աշխատանքը աղատ մարդու գործ էր, այլ ստրուկի գործ. քրիստոնէութիւնը, ընդհանրապէս, միայն աշխա- տանքն էր թող տալիս արդիւնաւոր լինելու, իսկ փողը—ոչ: Կաթիլով հոգեւորականութիւնը այն աստիճանի ընդհանրացնում է այդ հայեացքը, որ յայտնում է փողը միանգամայն ապարդիւն. նա աւելի հեռու է գնում. նա արգելում է փողի տո- կոսը որպէս վաշխաւորութիւն: Արդեւելով տոկոսը, կանոնական վարդապետութիւնը արգելում է կա- պիտալ գործադրութիւնը շահելու: Այդպիսով կապիտալը կորցնում է իր նշանակութիւնը և ոյժը այն ժամանակվայ ազգերի առաջ և դորանով, ևս կարծում են, կարելի է մեկնել թէ ինչու միջնա- դարեան կաթիլախոսները համարեալ թէ միայն հրէաներն էին, դորանով նաև մեկնվում է, թէ ինչու նոցա օտարաբնիկ հալածանքներ էին կրում քրիստոնէաներից ու առված էին բոլորից:

Այդ հանգամանքներում, վաճառականութիւնը կորցնում է իր յարգը, իսկ դուր հակառակ, երկ- րագործութիւնը ստանում է աւելի մեծ նշանա- կութիւն, որովհետեւ նա նկատելի աշխատանք է պահանջում: Բայց ի՞նչ առևտուրը չէր կարող

կարելի է արդեօք կարին քաղաքում հիմնել մի այդպիսի ուսումնարան, ով է յաջողութեան երաշ- խաւորը. ովքեր են լինելու ուսուցիչները. ինչ է դրանց նախագիծը... Բայց այս օջանդուհն հար- ցերը անպատասխան մնացին: Մարդը կոնգրակ էր բերել իր հետ, խօս սուտ չի ասում. այսպէս էր վերջանում որ և է վէճ կամ բանակութիւն. թէպէտ և կոնգրակի մէջ կարին քաղաքի հոտն էլ չը կայ...

Այսպէս թէ այնպէս—ուրիշները միայն խօսում էին, իսկ հայր Ռուբինեանցը իր գործն էր կատա- րում—ժողովելով Մոսկվաբնակ հայերից մօտ 1900 ռուբլի:

Եւ միթէ կարելի է մեղադրել Մոսկվացի հայե- րին, որ նրանք տալիս են, բայց չը գիտեն ինչ գործի, ինչ նպատակի համար. յանցաւորը թիֆ- լիսն է, որ մեր հայութեան կենտրոնն է համար- վում և որի բարոյական պարտքն էր պարզել և բացատրել այսպիսի մեծ խնդիրներ: Մենք կար- ծում ենք, որ թիֆլիսը իր խնդիրներով և մասնովով միշտ պէտք է միջամտու լինի այդ աե- սակ խնդիրների մէջ, հարց ու փորձ անել, հաս- տատ իմանայ այդ նորեկ ժողովարարների (մասնա- լանդ տաճկաստանցի) նպատակները և նրանց նը- պատակները որ աստիճան համապատասխան, օգ- տաւէտ և որ գլխաւորն է—իրագործել լի- նելը: ՎՄԿԻՄ-ը իր 161 համարում առաջարկում է, որ մի յանձնարումը կազմվի Վ. Պօլսի ժողո- վարարութիւնների վերաբերութեամբ թղթեր և վկայագրեր տալու հանգանակութիւն անող ան- ձանց. մենք մեր կողմից կաւեղացնենք, որ մի այդ- պիսի յանձնարումը թիֆլիսում ևս լինելը աւե- լորդ չէր լինի, այլ մասնաւոր օգտաւէտ, ի նկա- տի ունեւոր, որ մեր ժողովուրդը աւելի հաւատ կընծայէ թիֆլիսի յանձնաժողովի վկայագրերին քան թէ Վ. Պօլսի իր ներկայ տատամական վի- ճակով:

Պէտք է կարծել, թէ հէնց հանգանակութիւն անելով պիտի սահմանափակվէր հ. Ամբրոսիոս Ռուբինեանի պաշտօնը. բայց ոչ. գործի հետեանց- ները այնպէս են, որ մեզ համոզեցին, թէ հայր սուրբը բացի իր պաշտօնից՝ ձեռնամուխ է եղ և այլ մի քանի գործեր կատարելու, որոնք նրա պաշ- տօնից դուրս են և որոնց համար՝ նա, մեր կարծի- քով ոչ թողուցնում ունի և ոչ իրաւունք: Մենք մտադրել չենք երկար խօսել պատ. հայր սուրբի վարժարանների մասին. մէջ կը բերենք իրողու- թիւնները, որոնք ամենից լաւ կը համոզեն ընթեր- ցողներին:

1. Լուսմ ենք և այդ հաստատ է, որ Հ. Ամբ- րոսիոսը իր Նիժնի—Նովոգորոդ եղած ժամանակ մեծ քանակութեամբ քաթման է գնել աշակերտների զանազան տեսակ պիտոյից համար. բացի սրանից —մի անգամն պաշար զանազան իրեղենների և ուսումնարանի կահկարասիքներ. օրինակ նա գնել է 200 ի չափ հայելիներ, 20—30 դիւփին դանակ —պատուաբաղ, ստեղծներ (шпатель), անկոշիկ համար զանազան չիթեր, բարձի երեսներ և շատ ու- թիւ մանր բաներ—մօտ 2400 ռուբլու:

2. Հ. Ամբրոսիոսը անպատշառ մտքին դրել է կամ Մոսկվայում և կամ Պետերբուրգում մի քանի հարկեր զոյդ կոշիկ և 100—200-ի չափ յարդեայ գլխարկներ (соломенные шляпы) պատրաստել ա- շակերտների համար:

3. Ինչպէս որ հայր սուրբի յայտարարութիւնից երևում է («Փորձ»-ի մէջ) ժողովրդի բոլոր նուփ-

դատարկ. ուրեմն նա շարունակվում էր, չը նայած կանոնական ծուռ հայեացքներին:

Թէ ինչպէս է փոխվում ընկերութիւնների հար- ցը, այդ իսկոյն հակադրում է. աշխատանքի վրա հիմնված ամեն տեսակ ընկերութիւններ աղատ էին: Այդ աղատութեամբ կապիտալիստները ըսկը սուտ են օգտվել և փոխանակ հոռոպեցնելի նման առանձին ձեռնարկութիւններ սկսելու, նո- քա հիմնում են ընկերութիւններ մի ընդհանուր անունով. իսկ ընկերութիւնը հիմնում են, որպէս զի աւելի ուժեղ լինեն թէ հասարակաց կարծիքի դէմ. պաշտպանվելու համար և թէ հեշտացնելու փոխառութիւններ անելը, որովհետեւ մէկ անձի զօրուր կը լինէր այն ժամանակ հաւատ ընծայել Վյդ առևտրական ընկերութիւնները տարածում էին իրանց գործունէութեան չլծանակը աւելի հե- ռու և ըմբռնում են վերջապէս ամբողջ երկիրներ, ինչպէս օրինակ Հանգէն, որը ներկայացնում էր գերմանական հիւսիսային երեք մեծ քաղաքների միութիւնը վաճառականութեան համար և որը տարածեց իր ազդեցութիւնը Եւրոպայում, Ռուս- սաստանում և այլ երկիրներում ևս:

(Կը շարունակվի)

Թիւնը հին ազգերի աշըում բնական օրէնք էր դարձել. բնական օրէնք, այսինքն որ մարդուց չէ կախված նրան ուրիշ բանով փոխարինել, այլ նա հէնց Աստուածանից տուած օրէնք է, որը պիտի մինչ կատարածն աշխարհի պահպանվէր: Այդպէս մտածում էր ոչ թէ միայն տգէտը, այլ և գիտնականը, փիլիսոփան. երեւելի փիլիսոփա Արիստոտելը, որի հանձարը և հեռատեսութիւնը դեռ այժմ ևս, որպէս և առաջ, բոլոր գիտնա- կաններին զարմացնում են, ասում է իր «Քաղաքա- գիտութիւն» գրքի մէջ (գլուխ 2. ֆ 5). «եթէ մի ժամանակ զայ, երբ գործիքները ինքն իրանք աշ- կատէին, եթէ մեքենան առանց մարդու ձեռքերի ինքն իրան դէս ու դէմ չարժէր—այն ժամանակ ստրուկը հարկաւոր չէ: Այդ խօսքը նա գրած է, ի հարկէ, առանց մի վարդեան կատանելու, թէ ճշմարիտ որ մի ժամանակ պիտի զայ, երբ 18 և 19. դարերի հանձարները պիտի ստիպվին մեքե- նային չորու ազդեցութեամբ ինքն իրան չարժիլ...»

Ընկերակցական սկզբունքը նաև չէր կարող հիմք ունենայ մի ազգի մէջ, որը վերին աստիճանի անձնական տիպար էր ներկայացնում: Հռոմէա- կան ամբողջ ժողովրդի հայեացքները անձնակա- նութեան վրա են հիմնված, առանձնութիւն իր ընտանիքի և սեփականութեան մէջ—այդ հին հռոմէացու իդեալն էր:

Բաժ
լիւս
պահ
Մոսկ
իր ժո
ցաւ զ
Այս
ինչ ի
ժախ
այս պ
նը
այնտ
իրեղ
200 հ
3, 4 Վ
սուսն
այս
(ժան
ւելի
րուբ
Զարմ
պել, և
բանի
սուսն
թարգ
Փրանս
Չը
համե
լով, մ
կամ կ
մունք
սուրբ
բերա
տարա
մէջ. յ
և գոհ
սուրբ
թիւնը
Գու
վարդ
տեսն
պարն
էլ-մը
որ իբ
թիւն
բռնա
կնձի
փաս
անկ
թիւն
տեսն
տուա
գուր
տաս
կառա
գիտմ
նաւոր
դաղա
ներու
տես
պ. հա
բարե
բեւո
սընց
թիւն
տես
1876,
կայ 79
ձեզ կը
Ծնո
Նուսն
մի քան
(ծրա

րած գումարները նա իսկոյն պէտք է հասցնէ թիֆլիս—անձանց, որոնք յանձն են առել զանձապահութեան պաշտօնը. այդ անձանցից մէկն էլ Մոսկովա էր. բայց հայր սուրբը աւելորդ համարեց իր ժողոված գումարը նրան յանձնել և ուղևորվեցաւ զէպի Պետերբուրգ։

Այժմ թող ներկի լինի մեզ հարցնել. արդեօք ինչ իրաւունքով է արել հ. Ռուբինեանցը այս ծախսերը. ո՞րի խորհրդով. արդեօք ո՞ւմ համար է այս պատրաստութիւնը. ո՞ր է այն ուսումնարանը, երբ պէտք է նա չինովի, երբ պէտք է լինեն այնտեղ աշակերտներ, որ նրանց հարկաւորվին այդ իրեղէնները. Արդեօք ինչո՞ւ համար է նա գնել 200 հայելի—առուստեր անելու նպատակով. միթէ 3, 4 վերջապէս 10 հատը բաւական չէր մի ուսումնարանի համար. կարելի չէր արդեօք բոլոր այս ապրանքները թիֆլիսումն էլ ձեռք բերել (ծանօթ անձանց միջնորդութեամբ)՝ գուցէ աւելի արժան գնով և իւրաքանչիւր պուզին 3—4 ռուբլ գուր տեղը ճանապարհածախս չը վճարել. Զարմանալի բան է. ինչո՞ւ համար այսպէս շտապել, երբ որ դեռ նոր պէտք է չինովի ուսումնարանի շինութիւնը, դեռ նոր պէտք է գնան ուսուցիչները և արդար ուսանելու և նոր պէտք է թարգմանվին երկրագործութեան ձեռնարկները ֆրանսիերէնից....

Չը գիտեմք ինչ եղբայրացութիւնների պիտի հասնեն մեր ընթերցողները այս տողերը կարգաւորվ. մենք զգոյշ կը լինենք առ այժմ որ և է միտք կամ կարծիք յայտնելու հայր Ամբրոսիոսի վարձուները վերաբերմամբ—յուստով, որ ինչը հայր սուրբը պիտի շտապի պատասխան տալ մեր վերոբերեալ հարցերին և դրանով վերջ դնել զանազան տարակուսանքների, որոնք ծագել են ժողովրդի մէջ. մանաւանդ որ այդ իսկ հարցերի բաւարար և գոհացուցիչ պատասխաններից է կախված հայր սուրբի հանգանակութեան ապագայ աղոթութիւնը։

Բարեկամ

ՆԱՄԱԿ ԱՍԱԼՅԱՅԱՅ

4 հոկտեմբերի

Գումարի վճռմամբ տեղիս քաղաքային կառավարութեան 1878 թվականի մայիս և իւլից մատենան յանձնված է ի վերադնութիւն հետեւեալ պարունակին—Մկրտչի Զերկիւնաց, Գրիգորի Ղէ-լէ-վարեանց և Զովհաննու ճարտիւնաց։ Նախ և առաջ որ իբր թէ ինչ ժամանակ այս մատենի վերադնութեան մասին հաշուաւորներն, որիստուր զիլքը բռնած լինելով, միջամուխ են եղել, այս և այն կնիքն հաշիւների վերաբերութեամբ հիմնաւոր փաստեր պահանջել, և լաւ խոզարկութիւններ անել ծախուց ստուգութիւնը և անստուգութիւններն գտնելու և այլն, պ. Գ. իշխալ հաշուաւորներից միւսին ծածուկ կանչել և երկիւղներ տուած է, որ այդ օրինակ քննութիւնների և ստուգութիւնների ետեւից չը քաղէ, ապա թէ ոչ, պատասխանատուութեան տակ է ընկնում, որպէս հաւկառակորդ քաղաքային վարչութեան։ Չը գիտեմ, եթէ ստույգ է այս իրողութիւնը ինչ օրինաւորութեան է ծառայում պ. Գ. այդ տեսակ դադարի խստութիւններով և տղայական երկիւղ ներով, սարսափ և սոսկում ձգելը պարոն հաշուաւորի սրտին և մտքին մէջ։ Ես խորհուրդ կը տամ պ. հաշուաւորներին, որպէս երդուեալ անձինք, բարեխիղճ հոգեով առանց խղճելիւն արատաւորելու և իրենց մարդկութեան աղնութիւնը կորստնցնելու, մաքուր և անկողմնակի հաշուաւորութիւն անեն, և ոչ միայն 1878 թվականի մատենան քննելով պէտք է բաւականանալ, այլ և 1876, և—77 թվականներին էլ և ի վերջոյ ներկայ 79 թվականինը։ Ուրեմն, պ. հաշուաւորներ, ձեզ կը մնայ այնոյ այո, և ոչն ոչ, խստովանել։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հնորակալութեամբ ստացանք Ա.Գ.ՈՒԼԻՍԻ Նուսնուսանց եղբայրների մետաքսի գործարանից մի քանի կ ա ժ ե Ր (МОТОК) որպէս նմուշներ (образцы)։ Մենք ստացանք այդ նմուշները պ.

*) Բացի սրանցից՝ պէտք է ի նկատի ունենալ որ հայր սուրբը ինչպէս ասում են, 400 ռուբլու չափ զանազան զգեստ, լրեղէններ և զարդեր է գնել իր համար. միայն մենք չը գիտենք այդ ինչ գումարից է. գուցէ իր սեփական բաւկից լինի....

Խոջամիրեանցի ձեռքով. Հնորակալութեամբ ենք պ. պ. Նուսնուսանցի իրանց գեղեցիկ արդիւնագործութեան համար. կաթերից չորսը կօծնի բնական գոյն ունեն, իսկ մնացածները ներկված են։ Նրանցից մինը քաշված է ամբողջութեամբ երկու կօծնից բաղկացած մի թելից։ Նուսնուսանցի գործարանը ունի արդէն մի քանի մէղաքներ, օրինակ Մոսկովայի ընդհանուր ուսուց արհեստագործական հանդիսից ստացած մէղաքը, և այլն. կովկասի հայերը կարող են պարծնել, որ ունեն Նուսնուսանց եղբայրների Ազովի մետաքսի ֆաբրիկայի պէս մի հիմնարկութիւն։

Հոկտեմբերի 17-ին գիշերը կրակ յայտնվեց Զուբալովի տան մէջ գտնված Նախեմանի հագուստների խանութի կից միւս խանութում. կրակից վնասվեցին նոյնպէս և պ. Նախեմանի թէ խանութը և թէ ապրանքները։

Նրէկ, հոկտեմբերի 18-ին մեր ԵՐԵՒԱՆԻ բաժանորդ պ. Սմբատ Սարգսեանին ուղարկեցինք 200 ռուբլ առաջին պրմիան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԻՄՆԱՄԻԱ

«Նա այժմ դիմում եմ մեր աշակերտուհի օրիորդ Ժէնէնին։ Այս երեսուն միլիոնը, որ պետութիւնը տալիս է տարրական ուսմանը, նա սրանից գրեթէ հաւասար մասն է հանում թէ տղայոց դաստիարակութեանը և թէ օրիորդաց կրթութեանը։ Բայց վերը յիշած ութը միլիոն ութը հարիւր եօթանասուն իննը հազար ֆրանկը, որ նուերված է միջնակարգ ուսման, բոլորը գործադրվում է տղայոց վրա, իսկ օրիորդների վրա ոչինչ։ (Ընդհանուր ծիծաղ)»

«Պրանսիայում աղջկանց համար միջնակարգ ուսում չը կայ։ Եթէ ներութիւն բաշէք Լիօնից դնալ Ժենէի, որ շատ մեծ տաւրածութիւն չէ, դուք այնտեղ կը գտնէք օրիորդաց մի դպրոց, որ նոյնպէս գեղեցիկ պահպանված է, և նոյնպիսի գեղեցիկ արգասիքներ է տալի, ինչպէս և մեր ամեն մի լիցէյօնը։ Իմ բարեկամներից մէկը,—Եթէ ես ասեի իմ աշակերտներից մէկը, նա դրանից անշուշտ չէր ներանայ, բայց ես չեմ կամենում մեղադրվել հպարտութեան մէջ, դուք նրան արդէն ճանաչում էք պ. Մանուէլը։—Պ. Կամիլը—Սէ—Մանուէլը. այս հարցի վերաբերութեամբ օրէնքի մի ծրագիր է ներկայացրել պատգամաւորների ժողովին, և շուտով այդ օրէնքի մասին վիճաբանութիւններ կը սկսվին պատգամաւորների ժողովում, և յոյս կայ, որ այս պահաւոր կը լրացնէ իմ բարեկամի առաջարկած օրէնքի յաջող ընդունելութիւնը։

«Նա մտածել է ինչպէս և օր. Ժէնէն, որ պետութեան կողմից բնաւ արդարութիւն չէ տղայոց դաստիարակութեան համար, աւելի միջոցներ տալ, քան թէ աղջկանց դաստիարակութեան համար։ Բացի Մանուէլը ուրիշ շատերն էլ կան, որոնք այն կարծիքի են, թէ եթէ դաստիարակութեան գործի մէջ հարկ լինէր անպատճառ անհասարակութիւն գործել բիւր անգամ աւելի լաւ էր այդ անհասարակութիւնը գործել աւելի յօգուտ աղջկանց քան թէ տղանց։ Եւ խոհմութիւնն ու արդարութիւնն էլ այսպէս են պահանջում, ոչ թէ նրա համար, որ սրանով ես կամենում եմ մտաւոր ոյժով լրացնել կանանց ֆիզիքական ոյժի պակասորդը—ոչ. այլ միայն նրա համար, որովհետեւ, ինչպէս և մենք այդ կրկնել ենք այնքան անգամ, կանայք ծնվում են դաստիարակներ։ Այս նրանց կոչումը, նրանց ճաշակը, նրանց արուեստն է. նրանք այս կոչման մէջ ամենապատշաճ յաջողութիւն ունեն։ Եւ որովհետեւ սովորեցնելու հետ միասին կանայք մի և նոյն ժամանակ և կրթում ու դաստիարակում են,

ուստի որչափ մենք աշխատենք բարձրացնել ուսմանը, այնքան կանանց միտքն ու սիրտն՝ այնքան էլ մենք միջոց կը տանք հասարակութեանը խաղաղասէր ու բախտաւոր լինելու. սրանով մենք միջոց կը տանք նոյնպէս և ֆրանսիական հանրապետութեանը ծաղկեցնելու և կարգացնելու իր ժողովրդական անկեղծ ու ազնիւ սովորութիւնները, որոնցից նա այս օրվան օրս գուրի է, և առանց որոնց, զոնէ ինձ համար, նա իրականութիւն չունի։ (Նեցիցէի և ծափահարութիւններ)»

«Պետութիւնն այժմ միջնակարգ ուսման համար միայն իննը միլիոն է տալի, բայց եւ կող տարի նրանից քսան միլիոն կը պահանջեն։ Ո՛հ, ի՜նչ բաղդաւոր շուռյութիւն, ի՜նչ երջանիկ ծրագիր, որպիսի՜ բախտաւոր հաւրուած մեր պետական ֆինանսներին։ Ո՛հ, որպիսի՜ առատ պտուղներ ենք սպասում նրա բարոյական, մտաւոր և նիւթական հարուստ հինգի։ (Մափահարութիւններ)»

«Նա խօսում եմ վաճառականների մէջ, և հարցնում եմ թէ արդեօք ուսումից աւելի լաւ բան կայ, ես չեմ խօսում մարդասիրական կէտից, այլ ֆինանսական կէտից. պէտք է տալ ուսմանը բոլոր այն միլիոնները, որոնց նա պէտք ունի, և չը պէտք է ավտոսայ։

«Իսկ ինչ կը վերաբերի բարձրագոյն ուսման, պետութիւնն իր բիւզժէտից գրեթէ այնքան զուժար է տալի, որչափ և միջնակարգ ուսման համար. մօտաւորապէս իննը միլիոն, բայց միայն այն զանազանութեամբ, որ բարձրագոյն ուսման ուսանողները արձանագրութիւնների (inscription) և քննութիւնների անունով դրված հարկով կրկին վերադարձնում են պետութեանն այն գումարը, որ ըստացել են նրանից։ Պետութիւնը չէ կարող այս գումարեան մէջ մնալ. բարձրագոյն ուսման վերաբերութեամբ, նա պէտք է քաւէ իր երկարատեւ ժխտութիւնը, ինչպէս որ նա արդէն այդ անում է տարրական ուսման վերաբերութեամբ մի բախտաւոր առատարտութեամբ։

«Հարեանցի խօսելով, ես չեմ կարծում, որ մինչև անգամ բարձրագոյն ուսման բիւզժէտի այն թշուառ իննը միլիոնն էլ լաւ գործածվելիս լինի։ Չափազանց շատ համալսարաններ են հիմնում։ (Կառնարով զէպի պ. Լօրտէ)։—Նա ձեզ բացատրութիւն եմ համարում։ Ես ասում եմ, որ պետութիւնը բան ու գործ է չլինել ամեն տեղ՝ նոր-նոր համալսարաններ շինել. ես աւելի կուզեի, որ նա բարեկարգէր այն համալսարանները, որոնք արդէն զոյու-թիւն ունեն, և նրանց այնպիսի միջոցներ տար, որ նրանք գերազանցութիւն ունենային մեր հարեան երկրների համալսարաններից։ Անմիտ պահանջներին նա չափազանց շատ ուշադրութիւն է դարձնում։ Բաւական չէ միայն ուսուցիչներ և մինչև անգամ աշակերտներ ունենալ, պէտք է նոյնպէս միջոցներ ունենալ ուսումը բարեկարգ դրութեան մէջ դնել, և համալսարաններն էլ նախանձելի դրութեան մէջ։ Լիօնում դուք իրաւունք ունեք մի բժշկական համալսարան ունենալ, որովհետեւ դուք շատ հիւանդներ ունեք։ (Ընդհանուր ծիծաղ)։ Ես չեմ մեղադրում ձեր կլիման։ (Կարձեալ ընդհանուր ծածաղ)։ Դուք ահագին միջոցներ ունեք ամֆիթէատրի և կլի-նիկի համար, որովհետեւ բազմաթիւ ժողովուրդ ունեք, բազմաթիւ հիւանդանոցներ, հարուստ ու ճոխ աղքատանոցներ և մի խումբ հիւանդի բժշկներ։ Ամեն բան այստեղ ինձ հաճելի է. ինձ հաճելի է նոյնպէս և ձեր քաղաքային խորհրդարանը, որ տուել է համալսարանի համար մի ընդարձակ հող, և բոլոր այն միլիոնները, որ նրանից պահանջել են. յիշենք և պ. Հիլշէն, որի շինած լաբօրատուարների մէջ 1,200 ուսանողներ մեծ գիւրութեամբ կարող են աշխատել, նոյնպէս և ձեր համալսարանի դահլիճից պ. Լօրտէին, որի ազահութիւնը մենք ամենայն իրաւամբ

պարծանք ենք համարում։ որչափ շատ տաս նրան, նա այնչափ աւելի կուզէ. նա այժմ՝ աշակերտների համար կրկնողներ, և անատոմիայի պրօֆէսորների համար օգնականներ է պահանջում։ Բացի այս նա պահանջում է նոյնպէս և բոլոր այն միջոցները, որոնք մի ուսումնարանական հիմնարկութիւն կատարեալ բախտաւորութեան ու երջանկութեան մէջ են գնում։ Եւ կարծիքով նրան ինչքան էլ տան բաւական չէ։ Ամենքը կը ծափահարեն, ոչ միայն լիօնցիներին, այլ նրանց բոլորին, որոնք սիրում են մեծամեծ ուսմունքը և գիտութեան յառաջադիմութիւնը։ (Մափահարութիւններ)։

«Միայն պետութիւնը չէ, որ մեծամեծ զուհոյութիւններ է անում։ Նահանգները և ժողովուրդը նոյնպէս մեծ եռանդ և մեծ նախանձ են ցոյց տալի ուսման գործին։

«Ահաւասիկ իմ կողքին ձեր կուսակալը, (prefet), ահա ձեր քաղաքային խորհրդարանի նախագահը, ահա վերջապէս ընդհանուր խորհրդարանի անդամները, որոնք պարծանքով կարող են ցոյց տալ ձեր այն սխաղործութիւնները, որոնք կատարվել են այս գեղեցիկ նահանգի մէջ, այս մեծ քաղաքում։ Ինչ ասես, որ այստեղ չը կայ ուսումնարաններ, դպրոցական զանազան հիմնարկութիւններ, մատենադարաններ, մարմնամարզական, ուսումնարանական, առողջապահական և զանազան բարենորոգութիւններ, և այդ ոչ միայն Լիօնում այլ և ամբողջ Պրանսիայում։ Սրանից փոքր ինչ առաջ պ. Մանուէլի ասում էր, որ մի օրէնքի զօրութեամբ պէտք է ապահովանալ բարձրագոյն և տարրական ուսումնարանները։ Գաղափարն խորհրդարաններից շատերը առաջարկած օրէնքից էլ շատ առաջ են անցել։ Կոտանքները կրկնապատկում են իրանց ճիւղը։ Գիշերօթիկ և երթեւեկ աշակերտների համար ընտանիքների լիցէնսներին վճարած գումարը 1855 թվին հասնում էր մինչև 7,202,094 ֆրանկի. 1876-ին այդ գումարի թիւը հասաւ 15,813,735 ֆրանկի։ Նոյն իսկ այս րօպէիս ընտանիքները միջնակարգ ուսման համար իւրաքանչիւր տարի ահագին գումարներ են տալի, որոնք թիւը հասնում է 65,605,929 ֆրանկի։ Այս գումարի մէջ ես հաշւում եմ լիցէնսներին, հասարակական դպրոցներին և ազատ հիմնարկութիւններին տուած փողերը։ Եւ այսպէս պետութիւնը, նահանգները, հասարակութիւնները և ընտանիքները գեղեցիկ մրցութիւն են անում միմեանց։ Սա մի հիւանդի եռանդ (elan) է. պարոններ, Պրանսիան վերածնում է։ (Նուսնուսանցի ծափահարութիւններ)։

(Կը շարունակվի)

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆՑ

ԲԵԼԳԻՍԻ, 1830 հոկտեմբերի։ Միացեալ-Նահանգների դեսպանի և Բիստիչի մէջ առեւտրական յարաբերութիւնների դաշնադրութիւն կապվեցաւ. Բէլգիացիները այսուհետեւ հիւսիսամերիկեան գլխաւոր հիւպատոս կը նստի։ Սերբիական սինօդը սերբիական եկեղեցին անկախ է հրատարակում, և մտադիր է Միքայէլ մետրօպօլիտին սերբիական եկեղեցու գլուխ նշանակել։

ՍՈՖԻԱ, 1730 հոկտեմբերի։ Բաւականաչափ պատգամաւորների ներկայ չը գտնվելու պատճառով, աղղային ժողովի նիստը չը կատարուէ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐԱՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՋԱՌ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՂԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՆ

ՋԱՌԱՆՈՑՆԵՐ ԿՈՂԱՍԵԱՆ

- 1 Սրբանշատանց-Փորոս ԱՂԱՐ 1 ր. 25 Կ.
- 2 Ս. Մանգրինանց-ԿՐՈՆԻ ԶՈՒ ԳԵՐԱՆԱԿԱՆ ԶԵՍԱՋՈՏՈՒԹԻՒՆ 1 ր. —
- 3 Բժիշկ Ա. Բարսեղյանց ՌՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԶԱՐՑԵՐ 1 ր. —
- 4 Ա. Բաճալթրեանց-ՔԵՐԱԿԱՆ ՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՋՈՒՆ — 25 Կ.
- 5 Երկաթէ ԳԻՄԱԿՈՎ ՄԱՐԴԵՆ ԱՆԵՏԻՔ ՊԱՏՐԱՐՔ ԶԱՐՑՈՑ 1 ր. —
- 6 Յ. Շիշմանեանի-ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ԶԱՆԱԿՈՒՄՆ Ա. 1 ր. 15 Կ.
- 7 Փարոս 1879 — — — Թ. 1 ր. —

ՎԻՃԱԿԱՌՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆ Զայոց վարատանի և իմերեթի հանդերձ դատու հոգեւորականաց Տփլիսոյ ցաւօք սրտի ծան ուղանելով բարեպաշտ ժողովրդականաց քաղաքիս զփոխունի յատեացա զերապատու ՍԱՐԳՍԻ ՍՐԲԱՋԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՍՏԻ ԶԱՍՆ ԶԱՆԱԿԱՆՑ Կրօնէի գիտա 'ի հանդէս յուղարկաւորութեան հանգուցելոյն 'ի տանէ բժշկապետ Լիւիսեանցի 'ի մայր եկեղեցին Վանաց 'ի 20-ն ամսոյ յաւուր ՇԱՐԱՐՈՒՆ յ3 ժամու յետ միջօրէի: Իսկ կարգն օծման և թաղման կատարեցին յաւուր ԿԻՐԱԿԵՆ 'ի 21 ամսոյ 'ի 10-ն ժամու առաւօտու:

1—2

ԿՈՒԿԻՈՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՍԾԱՆՆԱՑ բախում ՄԵՃԱԿԱՌԱՐ Մ. ՄԻՐՋԱՅԵԱՆՑԻ Հիմնած ՏՂԱՑՈՑ ՀՈԳԵՌՈՐ ԵՄԱԿԱՆ ՌՍՈՒՄՆԱՐԱՆԻ Հոգաբարձութիւնը յայտնում է պատուելի Հայ Հասարակութեան, որ յիշեալ ուսումնարանի Համար ԱՇԱԿԵՐՏԱՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ սկսել է ՀՈԿՏԵՄԲԵՐ 15-ից: Ցանկացողը կարող են իրանց որդիքը ներկայացնել 'ի ուսումնարանու: Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ երեցփոխան պ. Բ. Փրկաբեկեանց ամենայն օր մինչև առաւօտեան ժամը 9: Աշա-

կերտաց տարիքը 12-ից մեծ և 7-ից փոքր պիտի չը լինեն:

Ընդունելութիւնը տեւելու է մինչև ներկա հոկտեմբերի վերջը:

2—3

ՎԱՐՁՈՎ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՍԵՆՏԱԿՆԵՐ կարասիքով սամովարով և ծառայով, Երևանեան հրապարակի վրա ՅՈՒՐԻՆՈՎԻ ՆՁ 11 տան մէջ Տէր-Ասատուրով տան մօտ: Հարցնել Պ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻՆ:

2—3

Կենտրոնական Գրախմանանոցում, Իմրցովոյ փողոցի վրայ, Արծրունու Գալլերէյում, վաճառվում են հետևեալ նոր գրքերը:

- 1. Կարմիր լապտեր, փողբիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած. Գ. — ր. 50 Կ.
- 2. — նոյնը առանց կազմի. — » 30 Կ.
- 3. Թաւամաղ մեղու փողբիկ մանկանց ընթերցանութեան համար. Թարգ. օր Ն. Տէր-Մարկոսեանի. պատկերազարդ և կազմած. — » 40 Կ.
- 4. Ներայր և քոյր մանկական վէպ. Թարգ. Չ. Մանգրինեանի պատկերազարդ — » 30 Կ.
- 5. Հակայական ձեռքեր. մանկական վէպ, Թարգ. Չ. Մանգրինեանի, պատկերազարդ — » 10 Կ.
- 6. Փարոս Հայաստանի. պատկերազարդ հանդէս ընտանեկան ընթերցանութեան համար. 1 — Կ.
- 7. Փարոս աղբար Հայաստանի ճանապարհորդ. Գործ. Գ. Վ. Սրուանձտանց 1 » 25 Կ.
- 8. Նրկունը իններորդ դարու. գործ Նրկունցի. 1 » — Կ.
- 9. Պատանեկան ներշնչումներ, գործ. Հրանտ Ասատուրի. — » 60 Կ.
- 10. Մի կաթիլ արտոյր, գործ իմ հեղու. Սիսակ Հայ մոխրին վրայ. — » 35 Կ.
- 11. Սամա և էլ Մուրատեանի կտակի խնդիրը, դասախօսութիւն Ս. Արծրունու. — » 50 Կ.
- 12. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, բժ. Ա. Բարսեղյանի 1 » — Կ.
- 13. Մարմնակազմական կամ անատոմիական բաւարան Լաւրենթի և Ռուսերենից Հայերեն. բժ. Լ. Տիգրանեանցի 1 » — Կ.
- 14. Կրօնք. հոգեբանական հետազոտութիւն Ս. Մանգրինեանի 1 » — Կ.
- 15. Հայկական թատրոն. Վալ. Եր. իմ վեպեր, փարս երեք պատկերով գործ. Մ. Տէր Գրիգորեանցի — » 40 Կ.
- 16. Բերքեր բիճու հանաքը. Օպերետա մի գործողութեամբ, Թարգ. Ն. Լալայեանցի — » 25 Կ.
- 17. Աշխատանքի երկոյ գիւղում, փողբիկ մէկ արարուածով, փոխադրութիւն Գ. Շահրուբադեանի — » 25 Կ.
- 18. Բունի ամուսնութիւն. կոմեդիայ մէկ արարուածով, Թարգ. Գ. Չախլեանի — » 40 Կ.
- 19. Ժանս և Ժանսէտ օպերա-փողբիկ, Թարգ. Գ. Շահրուբադեանցի մէկ գործողութեամբ — » 40 Կ.
- 20. Պէպո. կոմեդիա երեք արարուածով, գործ. Գ. Սուրուբեանի — » 30 Կ.
- 21. Պառանքներ խրատ. փողբիկ մէկ արարուածով Մ. Տէր Գրիգորեանի — » 50 Կ.

Նոյն տեղը վաճառվում են ամենայն տեսակի դասագրքեր Հայերեն, Ռուսերեն և օտար լեզուների, դասական պետոյքներ ուսումնարաններ և աշակերտների համար, Հայերեն Ռուսերեն և Գաղղերեն վրայադրութիւնների, ամենայն հասակի ընթերցանութեան և գիտութեան գանապան ճիւղերին վերաբերող գրքեր. պատուէրները կատարվում են ամենայն արագութեամբ: Օտարաբաղադրել իրանց պահանջները պէտքէ ուղարկեն հետեւեալ հասցեով „Въ Тифлисъ. Въ центральную книжную торговлю“

6—10 (2)

ԶԻԻԹԱՅԻՆ ՊԱՏԻՃՆԵՐ

ՆՕՐՎԵԳԻԵՅԻ ՄԵՐՔԵԾԻ ԶԻԻԹԻՑ, որ պատրաստված է Մօսկվայի ղեղադործ:

ԳԻՐՇԱԵԼԴՏԻՑ

Գիւցի Փրանսիական յայտնի պատիճների անհամեմատ թանգ գները դրդեցին ինձ պարապել նրանց արդիւնադործութեամբ և որովհետեւ պատիճների պատրաստելը գաղտնիք չէ և նրանք իրանց մէջ ոչինչ չեն պարունակում բացի մաքուր Զիւթից, եւ առաջարկում եմ իմ շատ լաւ պատրաստված պատիճները ՖԻՆՆՈՒԿԱՆՆ (ԳԻԻՕՅԻ) ՊԵՏԻՃՆԵՐԻՑ 40% էժամ:

Յոյս ունեմ, որ ուսւ բժիշկները և հասարակութիւնը խելացի կերպով կը վերաբերվեն դէպի իմ աշխատանքը, որովհետեւ նորա առիթ չունեն ուսաց փողերով պահպանել ԵՐՏԵՍԵՄԵՆԵԱՆ ԵՐԻԻՆԵՐՈՐԾՈՒԹԻՒՆԸ:

Ծախելու տեղերը. Ռուսաստանի բոլոր ղեղատունները և տեղական պահեստները: Գլխաւոր պահեստները. Մօսկվայում, Սուրբանսկի ղեղատուն Եւ. Ի. Գիրշիկովի և Բ. Կեյսեր և ընկ. Նիկոլսկիի վրա: Թիֆլիսում Զուրիսովի և Բուտոմովի ղեղատուն:

24—25

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց

ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Հոկտեմբերի 18-ին)		Ր.	Կ.	ՀԵՐԱԿԻՐ	ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ	Փ Օ Ս Տ	ԲԺՇԿԱՆՈՑ	ՄԵՆԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
Ոսկին (պոլոնիական)	8	15						
Հին 84 պր. մ. արծ. 1000 մ.	1420	—						
Հին 20 Կ. 72 պր. 1000 մ.	1245	—						
Վիդրիչի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—						
Երկրորդ 5% վիդրիչի »	230	—						
Մարտի կուրսը 270—	100	—						
Լճիկների կուրսը Օղեսայի վրա . . .	9	45						
Վէրայի կուրսը արծի 121 գլ. Գաւրեմի բարաթը . . .	100	—						
Աւստրական բանկի ակցիան 200 մ.	4	80						
Փոթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	310	—						
Շաբաթը բրոցիւ . . .	—	—						
» միւս տեսակը . . .	7	30						
» չաբար աւաղը . . .	7	15						
» տրանկուր . . .	5	30						
» մաքուր վաճառած . . .	5	30						
Բաւարական Երևանու Ա. մերկայի սերմից . . .	10	—						
Միւս տեսակը հին սերմից . . .	8	—						
Բուրդը թուլի . . .	7	40						
» թարաքամի . . .	7	50						
Աւիւրը Շորապալու . . .	4	—						
» երանի . . .	2	20						
Գարին . . .	—	—						
Մամը բնաճարայի (creap.) . . .	1	40						
Մետաքսը Նուրկայի . . .	12	40						
Կախեթ ունը . . .	180	—						
Կոկոնը Նուրկայ (սոմ.) . . .	140	—						
Ֆրիզոնը (շաբ.) Ազուրից . . .	50	—						
Կօֆէն մոկո . . .	65	—						
» լիւանի . . .	26	—						
» Մանտ ինչոն . . .	22	—						
» Մանտ ինչոն . . .	18	—						

Ր. Կ.	Վոլկատի և Անդրկովկասի քաղաքները . . .	Ռուսաստան . . .	Աւստրիա . . .	Անգլիա . . .	Գերմանիա . . .	Ֆրանսիա . . .
1	1	2	3	4	2	88
2	2	3	4	5	3	75

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Բիւն . . .	Փոթի . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փոթիից . . .	Բիւն . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 13	12. 13	5. 39	7. 5	9. 31	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29	6. 47	9. 40	

Ր. Կ.	Փիֆլիսից . . .	Գորբ . . .	Միխայիլով . . .	Գորբ . . .	Փիֆլիս . . .
9. 21	11. 58	1. 29			